ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2024-2025 ուսումնական տարվա ընդունելության ծրագիր

«Կերպարվեստ» մասնագիտության ընդունելության «Գծանկարչություն», «Գունանկարչություն» առարկաների ընդհանուր պահանջները

«Գծանկարչություն» առարկայի քննությանը տրամադրվում է 8 ակադեմիական ժամ:

Քննության ներկայացող դիմորդն իր հետ պետք է ունենա.

1. նկարչական տախտակ 22 ֆորմատի թղթի համար (60 -100 սմ չափի)
2. նկարչական 22 ֆորմատի 1 թերթ
3. գրաֆիտե մատիտներ՝ չոր, միջին և փափուկ տեսակների
4. ռետին, սրիչ, կոճգամներ

Տեղադրումներն ընտրվում են նախապես կազմված / ծրարները կնքված/ տարբերակներից:

«ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»

Չնաչափը	
Տարբերակ 1	Նատյուրմորտ կենցաղային առարկայով (կուժ, սափոր) և մրգերով (1-2 հատ): Աշխատանքը կատարվում է չեզոք ֆոնին:
Տարբերակ 2	Նատյուրմորտ երկրաչափական 2 առարկաներով (կոն, պրիզմա) և բանջարեղենով (2 առարկա): Աշխատանքը կատարվում է սառը ֆոնի վրա:
Տարբերակ 3	Նատյուրմորտ 1 կենցաղային առարկայով և 1 երկրաչափական առարկայով: Աշխատանքը կատարվում է սառը ֆոնի վրա

«ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Հ/հ	Հանձնարարությունը	Հատկացվող միավորը
1	Առաջադրանքի կոմպոզիցիոն կառուցվածքի բացահայտում և թղթի մեջ համոզիչ տեղադրում	*0-5 միավոր*
2	Առարկաների համամասնական չափադրում և կառուցում տարածության մեջ:	*0-5 միավոր*
3	Հեռանկարի (переслекстива) արտահայտումը գծանկարի մեջ:	*0-5 միավոր*
4	Առարկաների նյութականության ստացումը լուսաստվերի և ծավալների միջոցով: (0-3 բալ)	*0-3միավոր*
5	Աշխատանքի կատարման գրաֆիկական կուլտուրա	*0-2 միավոր*
Ընդամենը՝ *20 միավոր*		

«Գունանկարչություն» առարկայի քննությանը տրամադրվում է 8 ակադեմիական ժամ:

Քննության ներկայացող դիմորդն իր հետ պետք է ունենա.

1. նկարչական տախտակ 22 ֆորմատի թղթի համար (60 - 100 սմ չափի)
2. նկարչական 22 ֆորմատի 1 թերթ
3. գրաֆիտե մատիտներ՝ չոր, միջին և փափուկ տեսակների
4. ջրաներկ, ռետին, սրիչ, կոճգամներ

Տեղադրումներն ընտրվում են նախապես կազմված (ծրարները կնքված) տարբերակներից:

«ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»

Չնաչափը	
Տարբերակ 1	Նատյումորտ կենցաղային առարկայով (կուժ, սափոր) և մրգերով (1-2 հատ): Աշխատանքը կատարվում է չեզոք ֆոնին:
Տարբերակ 2	Նատյումորտ կենցաղային 2 առարկաներով (կուժ, թեյնիկ, սափոր) և բանջարեղենով (1 առարկա): Աշխատանքը կատարվում է սառը ֆոնի վրա:
Տարբերակ 3	Նատյումորտ 1 կենցաղային առարկայով (կուժ, սափոր), բանջարեղենով և մրգերով (2-3 առարկա) :

«ԳՈՒՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Հ/հ	Հանձնարարությունը	Հատկացվող միավորը
1	Առաջադրանքի կոմպոզիցիոն կառուցվածքի բացահայտում և տեղադրում թղթի մակերեսին	*0-5 միավոր*
2	Առարկաների համամասնական չափադրում և կառուցում տարածության մեջ	*0-5 միավոր*
3	Գունային ներդաշնակ համադրություն (կոլորիտ) աշխատանքի մեջ	*0-5 միավոր*
4	Լուսաստվերի միջոցով առարկաների նյութականության բացահայտում	*0-3միավոր*
5	Գունանկարչական աշխատանքի կատարման կուլտուրա	*0-2 միավոր*
Ընդամենը՝ *20 միավոր*		

Ծանոթություն՝ «Գունանկար» առաջադրանքը կատարվում է ջրաներկով:

Ծանոթություն՝ Քննությունն ավարտելուց հետո աշխատանքը ծածկագրվում է, այնուհետ, գնահատվում սահմանված չափանիշներով: Գնահատականների հայտնումը, բողոքարկումը կատարվում է գրավոր աշխատանքների համար սահմանված կարգով:

Հաստատված է արվեստի և սպորտի ամբիոնի 12-րդ նիստում:

Արվեստի և սպորտի ամբիոնի վարիչ Ա. Ա. Բարսեղյան